ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գնման գործընթացներին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով նախատեսված վեճերով՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:

Սույն գործով Հայցվորը դատարան դիմելու համար նախապես վճարել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետով սահմանված՝ 100.000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ, 234.5-րդ, 234.12-րդ, 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ն ԵՎ ՌՈՒՖ» ՍՊԸ հայցն ընդդեմ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Հարսնաձոր» ՍՊԸ՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը անվավեր ճանաչելու և դրա հիման վրա գնման ընթացակարգին ընտրված մասնակից ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**